ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ԵՐԿՈՒ ԿԱՐԵՎՈՐ ԿԱՆԱՅՔ

Կանայք կարևոր դեր ունեն Ավետարաններում, և այստեղ՝ Սուրբ Ծննդյան պատմության սկզբում, մենք տեսնում ենք երկու առանցքային կանանց՝ Մարիամին և Եղիսաբեթին, որոնք հանդիպում են միասին և կիսվում հրաշալի հրաշքով, որը պատրաստվում էր տեղի ունենալ:

Մարիամը մոտ 70 մղոն ճանապարհ է անցնում, որպեսզի այցելի իր տարեց ազգական Եղիսաբեթին: Նա գնաց մի փոքրիկ գյուղ, որը կոչվում է Էյն Կարին: Նա գնաց տեսնելու, թե արդյոք իր ազգականը, 50-ականների վերջին, 60-ականների սկզբին, իսկապես հղի է: Նա մտածում էր անհավատալի փորձառության մասին:

Հրեշտակը պատասխանեց եւ ասեց Մարիամին, որ նա հղի է լինելու՝ առանց տղամարդու ճանաչելու: Մարիամը կարող էր հարցնել. «Իրոք սա իրական է»: Բայց Հրեշտակն այլ բան էլ ասաց. «Եթե դու դրա ապացույցն ես ուզում, ազգականը՝ Եղիսաբեթը, այժմ վեց ամսական հղի է, գնա և տես նրան»:

> *Ղուկ. 1.35-36,38 - 35 Հրեշտակը պատասխանեց եւ ասեց նորան. Սուրբ Հոգին կ՚գայ քեզ վերայ, եւ Բարձրեալի զօրութիւնը քեզ վերայ կ՚հովանաւորէ, վասն որոյ եւ այն ծնուած սուրբն էլ Աստուծոյ Որդի կ՚կոչուի: 36 Եվ ահա քո ազգականը՝ Եղիսաբեթը, նա էլ հղիացավ իր ծեր օրով, և նա, որ ամուլ էր համարվում, վեցերորդ ամսվա մեջ է: 37 Որովհետև Աստծու համար ոչ մի անկարելի բան չկա: 38 Մարիամն էլ ասեց. Ահա Տիրոջ աղախինն եմ. թող քո խօսքի պէս լինի ինձ: Եւ հրեշտակը հեռացավ նորանից:*

ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐՆԵՐ. ՂՈՒԿ. 1.39-56

*39 Մարիամն այն օրերում վերկացավ՝ շտապելով լեռնակողմը գնաց՝ Յուդայի քաղաքը.
40 Եւ Զաքարիայի տունը մտավ, եւ Եղիսաբեթին ողջունեց: 41 Երբ Եղիսաբեթը Մարիամի ողջույնը լսեց, երեխան նրա որովայնում խաղաց, և Եղիսաբեթը Սուրբ Հոգով լցվեց:*

I. ԵՂԻՍԱԲԵԹԻ ԽՈՍՔԸ.

42 Բարձրաձայն գոչեց ու ասաց. «Օրհնյալ ես դու կանանց մեջ, և օրհնյալ է քո որովայնի պտուղը. 43 Այս որտեղից էր, որ իմ Տիրոջ մայրն ինձ մոտ եկավ: 44 Որովհետև երբ քո ողջույնի ձայնն իմ ականջներին հասավ, երեխան իմ որովայնում ցնծությունից խաղաց: 45 Եվ երանի՜ նրան, որ հավատաց, որովհետև կկատարվեն այն բաները, որոնք Տիրոջ կողմից ասվել են իրեն»:

- ***Ինչո՞ւ է Սուրբ Հոգին կոչվում «Հիսուս Քրիստոսի Հոգին» և «Հիսուսի Հոգին»:***

  Սուրբ Հոգու ծառայությունը Հիսուսին բացահայտելն է:

  Մատթեոս 16.17 – Հիսուսը պատասխանեց ու ասաց նրան. Երանի՜ քեզ, Սիմո՛ն, Հովնանի՜ որդի, որովհետև ոչ թե մարմինն ու արյունը հայտնեցին քեզ, այլ իմ Հայրը, որ երկնքում է:

II. ՄԱՐԻԱՄԻ ԽՈՍՔԸ.

46 Եվ Մարիամն ասաց. «Թող իմ անձը Տիրոջը փառավորի: 47 Եւ իմ հոգին ցնծաց իմ Փրկիչ Աստծով: 48 Որովհետեւ իր աղախնի խոնարհութեանը նկատեց, որովհետեւ ահա այսուհետեւ բոլոր ազգերը ինձ երանի պիտի տան:: 49 Որովհետև Հզորն ինձ համար մեծամեծ գործեր արեց. և սուրբ է նրա Անունը: 50 Եւ նորա ողորմութիւնը ազգից ազգ նորանից վախեցողներին վրա է: 51 Իր բազկով զորություն ցույց տվեց, ցրեց ամբարտավաններին՝ իրենց սրտի խորհուրդներով: 52 Զորավորներին աթոռներից իջեցրեց, եւ խոնարհներին բարձրացրեց: 53 Սովածներին բարիքներով լիացրեց, եւ հարուստներին դատարկ արձակեց: 54 Օգնության հասավ իր ծառային՝ Իսրայելին՝ հիշելով իր ողորմութիւնը. 55 Ինչպէս մեր հայրերի հետ խօսեց, Աբրահամին եւ նորա զաւակին՝ մինչեւ յաւիտեան:

56 Եւ Մարիամը մնաց նորա մօտ երեք ամիսի չափ. եւ յետոյ դարձաւ իր տունը:

III. ՀԱՍՏԱՏՄԱՆ ԽՈՍՔԸ:

Ղուկաս 1.44 – Որովհետև երբ քո ողջույնի ձայնն իմ ականջներին հասավ, երեխան իմ որովայնում ցնծությունից խաղաց:

ԵՍԱՅԻ 11.1-3 – 1 Մի շառավիղ դուրս կգա Հեսսեի բնից, մի ընձյուղ կբուսնի նրա արմատներից: 2 Նրա վրա պիտի հանգչի Տիրոջ հոգին, իմաստության և հանճարի հոգին, խորհրդի և զորության հոգին, գիտության և Տիրոջ երկյուղի հոգին: 3 Նրա հաճույքը Տիրոջ երկյուղը կլինի.

Արդյո՞ք Աստված իսկապես ճանաչում էր ինձ նախքան իմ ծնվելը:

Գաղատացիներին 1.15-16 – Բայց երբ Աստված բարեհաճեց իմ մոր որովայնից ինձ ընտրել ու իր շնորհի միջոցով կոչել՝ հայտնելու իր Որդուն իմ միջոցով.

Երեմիա 1.4-5 – Եվ Տիրոջ խոսքը հասավ ինձ՝ ասելով. ,Քեզ որովայնում չկազմած՝ ես ընտրեցի քեզ, և քեզ, արգանդից դեռ դուրս չեկած, ես սրբեցի. ես քեզ ազգերին մարգարե եմ դրել:

Սաղմոս 22.9-10 – Հիրավի, դու ես, որ հանել ես ինձ իմ մոր արգանդից, դու եղար իմ հույսը՝ մորս կրծքի վրա եղած ժամանակ: Իմ մոր արգանդից ես հանձնված եմ քեզ, իմ մոր փորից դու ես իմ Աստվածը:

Հռոմեացիներին 8.29-30 – Որովհետև նրանց, ում սկզբում ճանաչեց, նախասահմանեց կերպարանակից լինել իր Որդու պատկերին, որպեսզի նա անդրանիկը լինի բազում եղբայրների մեջ: Եվ որոնց նախասահմանեց, նրանց նաև կանչեց, որոնց որ կանչեց, նրանց նաև արդարացրեց, իսկ որոնց արդարացրեց, նրանց նաև փառավորեց:

ԱՄՓՈՓՈՒՄ

Մենք այս հրաշալի պատմության մի մասն ենք: Մենք Աստծո փրկագնման պատմության մի մասն ենք, և դա մեզ մեզանից ոչինչ չի պահանջում: Դա շնորհի պարգեւ է: Ինչպես Մարիամը, Եղիսաբեթը և Հովհաննես Մկրտիչը, մենք էլ կանչված ենք մատնացույց անելու Հիսուսին: Այս Սուրբ Ծնունդյան ամսին եկեք մատնանշենք Հիսուսին՝ աշխարհի հույսին: